ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԳՐԻԳՈՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Իսկանդարյան,

Ի պատասխան Ձեր 08.04.2024թ. հ. 79-2024 գրության՝ տեղեկացվում է.

N ԵՔ-ԲՄԽԾՁԲ-24/16 ծածկագրով Երևան քաղաքի փողոցների ասֆալտբետոնյա ծածկի ճաքալցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, մասնավորապես՝ «փոսային նորոգման աշխատանքներ» բառը փոխարինվել է ճաքալցման աշխատանքներ բառով՝ 11.04.2024 թվականին գնումների վարչություն ուղարկված հայտ-համաձայնագրով: Վերոնշյալ ծածկագրով ծառայությունների համար բաց մրցույթը հրապարակվել է 2024-01-18-ից մինչև 2024-02-20-ը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի կիրառմամբ, քանի որ «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» քաղաքապետի №161-Ա որոշումը ընդունվել է 18.01.2024 թվականին: Ուստի 20.03.2024 թվականին կնքված պայմանագիրը ևս կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի կիրառմամբ, այդ իսկ պատճառով պայմանագրի Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցում զրոներ են: Համապատասխան ֆինանսական միջոցների տրամադրման մասին համաձայնագիրը կնքվել է 09.04.2024 թվականին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ